Ճշմարտացի տեղեկատվությունը նույնպես քարոզչություն է

Հարցազրույց ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԻ հետ

Լուսանկարը՝ Սերգեյ Սերգսյանի. ՕՆԱՐՅԱՆԻ Photo

– Պարոն Բարխուդարյան, արդեն երկու տասնամյակ է՝ Հայաստանն անկախ պետություն է, ինչը հայագետներին հնարավորություն է տվել նորովի լուսաբանել հայոց պատմության շատ ու շատ կնճռոտ հարցեր: Այսօր ինչպիսին է մեր ժողովրդի հետաքրքրությունն իր անցյալի նկատմամբ:

– Հայ ժողովուրդը մշտապես մեծ հետաքրքրություն է հանդես բերել իր անցած պատմական ուղու նկատմամբ: Սակայն այդ հետաքրքրությունն ավելի մեծացավ, երբ Հայաստանն անկախացավ, իսկ Արցախյան ազատամարտի շնորհիվ դե ֆակտո ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: Եվ եթե խորհրդային շրջանում հայ պատմաբաններն ստիպված էին տուրք տալ խորհրդային գաղափարախոսությանն ու զերծ մնալ հայոց պատմությանն առնչվող մի շարք խնդիրների ուսումնասիրությունից, ապա անկախության պայմաններում դրանք արժանացան ուշադրության, դուրս չմնացին հետազոտությունների դաշտից և վերջապես ստացան իրենց լուսաբանումը: Ուրախությամբ ուզում եմ արձանագրել, որ այժմ հայ ժողովրդի հետաքրքրությունն իր պատմության նկատմամբ ոչ միայն չի սրսկասել, այլև ավելացել է:

– Ադրբեջանական «պատմագիտությունը» զրաղված է հայոց պատմության կեղծարարությամբ ու ենթագրությամբ: Ո՞րն է մեր պատասխանը՝ հարևան հանրապետության պետական քաղաքականության աստիճանի բարձրացված կեղծարարության քարոզչությանը:

– Իսկապես, հարևան Թուրքիայում և Ադրբեջանում հայոց պատմության ենթագրությունները բարձրացված են պետական մակարդակի: Հակահայ քարոզչությունն այդ երկրների իշանությունների կողմից անթաքույց հովանավորվում է, ինչը, անշուշտ, որոշակի խնդիրներ է դնում մեր մասնագետների առաջ: Անկասկած, նշանակալի աշխատանք կատարվում է, սակայն իմ համոզմամբ դա բավարար չէ, քանի որ մեր հարևաններն առաջնորդվում են այն սկզբունքով, որ հարյուր անգամ կրկնված սուտը միտում ունի ընկալվելու որպես ճշմարտություն: Արևմուտքի բնակիչը, որ ծանոթ չէ հայոց պատմությանը, երբ տեսնում է, որ մի կողմն անընդհատ խոսում է, իսկ դիմացինը չի պատասխանում, մտածում է, որ չպատասխանողները լռելյայն ընդունում են դիմացինի ճշմարտությունը: Այս ամենը ցույց է տալիս, որ մենք, իրոք, տեղեկատվության և քարոզչության ասպարեզում շատ անելիքներ ունենք: ՀՀ ԳԱԱ նախագահությունը մտադիր է իր ենթակայության ինստիտուտների գործունեությունն այս առանցքային հարցում այնպես կազմակերպել, որ ի զորու լինենք ոչ միայն պատասխանել Ադրբեջանի և Թուրքիայի հակահայ քարոզչությանը, այլև ստիպել, որ նրանք դառնան պաշտպանվող կողմ: Սակայն այս խնդիրը հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ են պետության օժանդակությունն ու հովանավորությունը:

– Ինչ սկզբունքով պետք է կազմակերպել տեղեկատվական և քարոզչական աշխատանքը:

– Դրա համար շատ կարևոր են դիդակտիկ նյութերը, գրքերը, կինոֆիլմերը: Մի խումբ նախաձեռնողներ վերջերս սկսեցին «Հայոց Արևելից կողմերի պատմություն. Արցախ» ֆիլմաշարը, որի անդրանիկ ֆիլմը՝ «Վերադարձող քաղաք. Տիգրանակերտը» վերջերս հանձնվեց հայ հանդիսատեսի դատին: Այն հանգամանքը, որ ֆիլմի ստեղծողները՝ գիտական ղեկավար Բաբկեն Հարությունյանը, գեղարվեստական ղեկավար, կինոռեժիսոր Ռուբեն Գրիգորյանը, պրոդյուսեր Անդա Ահարոնյանը, ԵՊՀ պրոֆեսոր Համլետ Պետրոսյանը, Վենետիկի համալսարանի պրոֆեսոր, հայր Լևոն Զեքյանը և ամբողջ ստեղծագործական խումբը պատրաստվում են այն անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն և նույնիսկ թուրքերեն ներկայացնել աշխարհին՝ ցույց է տալիս, որ տեղեկատվության և քարոզչության ասպարեզում կարևոր քայլ է կատարվել:

Պատահական չէ, որ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար Ռ. Մեհթիևն իր՝ վերջերս մեջտեղ բերած հոդվածում, որն ուղղված էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2010 թ. հոկտեմբերի 16-ի ելույթի դեմ, ջղաձիգ հայտարարել էր, թե Տիգրանակերտը հայերի հորինածն է: Իսկ այդ ջղաձգությունը ցույց է տալիս, որ հայկական տեղեկատվությունն ու քարոզչությունը լուրջ դժվարություններ են ստեղծել ադրբեջանական պատմագիտության համար: Պատկերացրեք՝ եթե այդ ֆիլմաշարն աշխարհին մատուցվի՝ հայ ժողովուրդն ինչքան նոր բարեկամներ ձեռք կբերի: Սակայն ավելորդ չեմ համարում նշել, որ մի խումբ նվիրյալների ավյունն ու եռանդը բավարար չեն այդ գործը հաջող ավարտի հասցնելու համար: Անհրաժեշտ է պետության համակողմանի օժանդակությունը:

– Նշանակում է՝ մեր պատմությունն աշխարհին ներկայացնելու հարցում ևս թերանում ենք:

– Ստիպված եմ խոստովանել, որ, այո, մենք դեռևս լուրջ խնդիրներ ունենք մեր պատմությունը համաշխարհային հանրությանը ներկայացնելու գործում: Դրա համար կան թե սուբյեկտիվ, թե օբյեկտիվ պատճառներ: Հայ պատմագիտական միտքը վերջին շրջանում մեծ կորուստներ ունեցավ, իսկ գիտնականների ցածր աշխատավարձը հնարավորություն չի տալիս պատմագիտության ասպարեզում անհրաժեշտ թվով երիտասարդ կադրերի ներգրավել: Հարկադրված եմ արձանագրել, որ մեր պատմաբանների մեծ մասը օտար լեզուներ չգիտի, մինչև այսօր մենք բարձրակարգ թարգմանիչներ չենք պատրաստել: Եզրակացությունը մեկն է՝ ինչպես Մեսրոպ Մաշտոցի հեռավոր ժամանակներում էր, ստեղծել թարգմանիչների բարձրակարգ դպրոց, ինչը մեզ հնարավորություն կտա հայոց պատմությունը և հայի դրական կերպարը հավուր պատշաճի ներկայացնել աշխարհին: Այս ծրագիրն իրականացնելու համար շատ կարևոր է օտար լեզուներով հրատարակվող գիտական հանդեսի ստեղծումը, որն իր շուրջը կհամախմբի Հայաստանի, սփյուռքի և օտարազգի հայագետներին:

– Առաջին անդրադարձն ինչո՞ւ է Տիգրանակերտին վերաբերում:

– Ֆիլմաշարի 15 մասերը կոտ ամբողջություն են լինելու, սակայն յուրաքանչյուր ֆիլմ միաժամանակ ներկայանալու է որպես առանձին գործ: «Վերադարձող քաղաք. Տիգրանակերտ» ֆիլմի առաջինը լինելու իրողությունը մեծապես պայմանավորված է Տիգրանակերտի հնագիտական այնդումներով, ինչը հստակորեն վկայում է երկրամասի հայկականությունը:

– Դա ապացուցելով՝ մենք տեղեկատվական պատերազմում ինչ կշահենք:

– Հայտնի փաստ է, որ իսկական պատերազմներին նախորդում են քարոզչական պատերազմները, ուստի նշված ֆիլմաշարի դերն ու նշանակությունը դժվար է գերագնահատել, քանի որ այն մեզ հնարավորություն կտա աշխարհին ճշմարտացի տեղեկատվություն հաղորդել Հայոց Արևելից կողմերի վերաբերյալ: Քարոզչական պատերազմում, մասնավորապես Ղարաբաղի խնդրում, Ադրբեջանը լայնորեն օգտագործում է իր պետական և ֆինանսական հնարավորությունները: Հարկ եմ համարում նշել, որ մեր հանրապետության ղեկավարությունը մինչև վերջերս բավարար նշանակություն չէր տալիս այս հարցին, իսկ պետական որոշ այրերի կարծիքով քարոզչության զարգացումը համազոր է նախկին կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վերականգնմանը: Ուրախ եմ, որ այսօր մեր իշխանությունները՝ ի դեմս նախագահ Սերժ Սարգսյանի, միանգամայն այլ վերաբերմունք ունեն քարոզչության նկատմամբ: Սակայն այս ասպարեզում մեծ պարտք ունի նաև մտավորականությունը և իհարկե՝ առաջին հերթին պատմաբանները: Ես վստահ եմ, որ ամենամոտ ապագայում թե Գիտությունների ազգային ակադեմիան, թե բուհերը կասեն իրենց վճռական խոսքը:

Ամիդա ԱՐԾՐՈՒՆԻ